| | | |
|---|---|---|
| **“Ecolur” Informational NGO**<br>Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia<br>E-mail: ecolurpressclub@gmail.com<br>Web site: www.ecolur.org<br>Tel. (37491) 92 12 64 mob. | ECOLUR<br>NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY | **«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ**<br>Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան<br>Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com<br>Էլ. կայք՝ www.ecolur.org<br>Բջջ.՝ (+37491) 92 12 64 |


ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
պարոն Դավիթ Խուդաթյանին

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին կից Հասարակական խորհրդին անդամակցելու դիմում/հայտ**

Հարգելի պարոն Խուդաթյան,

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին կից հասարակական խորհրդին անդամակցելու համար առաջարկում ենք «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահ Վիկտորյա Բուռնազյանի (AV0601061) թեկնածությունը: Ստորև ներկայացնում ենք անհրաժեշտ տեղեկատվությունը հայտը դիտարկելու համար:

- **Անուն, ազգանուն**

Վիկտորյա Բուռնազյան

- **Կազմակերպության անուն**

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ

- **Գործունեության վայրը**

Երևան և ՀՀ մարզեր

- **Գործունեության ոլորտներ**

Ջուր, ընդերք, թափոն, վերականգնվող էներգետիկա, համայնքների կանաչ զարգացում

- **Ինչ այլ հասարակական կազմակերպությունների / նախաձեռնությունների հետ է համագործակցում**

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն «Էկոլուր»-ը CEE BankWatch Network-ի և NGO Forum on ADB-ի գործընկեր կազմակերպություն է, մշտադիտարկում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, գերմանական KfW զարգացման բանկի ֆինանսավորած ծրագրերը:

«ԷկոԼուր»-ը «Եվրոպայի կանայք հանուն ընդհանուր ապագայի» ցանցի (WECF, Women of Europe for Common Future) անդամ է և մասնակցում է WECF-ի հանդիպումներին, քննարկումներին՝ լուսաբանելով բնապահպանական խնդիրները:

«ԷկոԼուր»-ը Էկոլոգիական հասարակական դաշինքի անդամ է, CENN տեղեկատվական ցանցի անդամ է:

«ԷկոԼուր»-ը Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի անդամ է:

Ընտրվել է Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի կազմակերպման և անցկացման կոմիտեի ՔՀԿ անդամ՝ ներկայացնելով Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի 3-րդ աշխատանքային խումբը՝ որպես դաշինք:

- **Կազմակերպության/ անհատի վերջին երեք տարվա գործունեության համառոտ նկարագիր**

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն գործում է 2004թ-ից: Կազմակերպության հիմնական գործունեությունն է.

- Էկոլոգիական թեժ կետերում բնակչության իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանություն
- Հանրային վերահսկողություն շրջակա միջավայրի ու առողջության վրա ազդեցություն ունեցող ծրագրերի նկատմամբ
- Փորձագիտական գնահատականների տրամադրում ջրային ռեսուրսների, անտառի, հանքարդյունաբերության, կլիմայի փոփոխության, վերականգնվող էներգետիկայի, թափոնի ոլորտների վերաբերյալ:
- Կլիմայի փոփոխության հիմնախնդիրների և Հայաստանի կառավարության ստանձնած պարտավորությունների մասին հասարակության իրազեկվածության բարձրացում:
- Տեղեկատվական քարոզարշավների անցկացում՝ ուղղված շրջակա միջավայրի պաշտպանությանը և համայնքների կանաչ զարգացմանը:
-Երիտասարդության ներգրավում գործընթացներում:
- Որոշումների կայացման գործընթացներում հասարակայնության ուղղակի մասնակցությանն աջակցություն:

ՄԱԶԾ «Հայաստանի կլիմայական խոստում» ծրագրի աջակցությամբ էկոլուրը հրապարակել է «Տեղական մակարդակում կլիմայի փոփոխության մեղմման և

հարմարվողականության քաղաքականությունների իրականացման» ուղեցույցը, որը հրապարակվել է ՏԿԵՆ պաշտոնական կայքում (https://api.mtad.am/storage/pages/files/2025/06/pdf/24_17-18-sc796-685aa591b7236.pdf)։

«ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի և ՄԱԶԾ/ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ իրականացված «Ազդակիր համայնքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որպես Հայաստանի էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականության մեջ սոցիալ-էկոլոգիական մշակույթի ներդրման մասնակիցներ» ծրագրի շրջանակներում մշակել է «Համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և միջոցառումները» թեմայով զեկույցներ Թալին, Եղեգիս, Դիլիջան, Փամբակ համայնքների համար։

Վիկտորյա Բուռնազյանն ԱՃԹՆ բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ է։ Մասնակցել է Հայաստանում ԱՃԹՆ գործընթացի հանրայնացմանը։ Մասնակցել է Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության նախագծի մշակման գործընթացին՝ ներկայացնելով առաջարկություններ։ Որպես փորձագետ աշխատում է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերում։ Վերջին 3 տարիների ընթացքում ներգրավված է եղել հետևյալ ծրագրերի աշխատանքներում․

2025-2026, «Բարձրացնել Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կապված Նաիրիտի տարածքի նպատակային վերափոխման որոշման հետ» ծրագիր

2025-2026, «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի «Իրազեկվի՛ր և սատարի՛ր ՀՀ-ում Արտադրողի ընդլայնված պատասխանատվության համակարգի ներդրմանը՝ ի նպաստ առողջ շրջակա միջավայրի» ենթածրագիր, դոնոր՝ Շվեդիայի կառավարություն

2024-2025թթ․ «Երևանի քաղաքապետարանի և EBRD-ի կողմից Երևանի կանաչ քաղաքների գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման գնահատում»

2023-2025թթ․, «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար» (ԼԻԼԱ) ծրագիր

2024-2025թթ․, «Քաղաքացիական հասարակությունը դառնում է Երևանի կանաչ անցման ակտիվ մասնակիցը»

2024-2027թթ․, «Էներգետիկ պարադիգմի փոփոխություն․ Հարավային Կովկասի երկրներում կանաչ անցման նոր մարտահրավերների և խնդիրների հասցեագրում» ծրագիր

2024թ․, «Համայնքների հզորացում Հայաստանում կլիմայական քաղաքականության իրականացմանը մասնակցության և իրազեկման միջոցով» ծրագիր

2022-2024թթ. «Ազդակիր համայնքները և քաղաքացիական հասարակական կազմակերպությունները՝ Հայաստանի էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականություններում սոցիալ-էկոլոգիական մշակույթի ներդրման մասնակից» ծրագիր:

2024-2025թթ․ եղել է GOPA Partners in Action for Change and Engagement կազմակերպության փորձագետ:

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի և Վիկտորյա Բուռնազյանի մասնագիտական գործունեությունն արտացոլված է www.ecolur.org կայքում:


- **Հեռախոսահամար**
  **+37499 55 02 22**

- **Էլեկտրոնային հասցե**

  vicaburnazyan@gmail.com


Հարգանքով՝
Ինգա Զարաֆյան՝
«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,
կենսաբանական գիտությունների թեկնածու

09.11.2025թ.